ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՈՐՈՇՈՒՄ

№2017-7-2-Ա

ք. Երևան 06.12.2017թ.

Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2017 թվականի դեկտեմբերի 6-ի նիստում քննարկեց 2017 թվականի նոյեմբերի 14-ին արտոնագրային հավատարմատար Արարատ Գալոյանի կողմից ներկայացված՝ GÜNSAN ELEKTRIK MALZEMELERI SANAYI VE TICARET ANONIM SIRKETI (Osmangazi Mah. Yildirim Beyazit Cad. No:29 Sancaktepe Istanbul) ընկերության բողոքը «G» (IR1295744) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետի համաձայն գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը ենթակա չէ գրանցման, քանի որ այն շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում 9-րդ դասի ապրանքների համար միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «GG» (GUCCIO GUCCI S.P.A., Via, Tornabuoni, 73/R I-50123 FIRENZE, (IT), IR 778094, IR 776197, IR 468535, IR 644636) ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 118-րդ կետի 1-ին և 3-րդ ենթակետերի, 121-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն համեմատվող ապրանքային նշանների շփոթության հարցը որոշելիս հաշվի է առնվել այն, որ համեմատվող ապրանքային նշաններում առկա է ընդհանուր տեսողական տպավորություն, ինչպես նաև տառերի բնույթով պայմանավորված գրաֆիկական նման

գրելաձև, այն է՝ երկու ապրանքային նշաններն էլ ներկայացված են մեծատառերով և տառերը մտնում են մեկը մյուսի մեջ (GG):

Կոլեգիայի նախագահը հիմք ընդունելով «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքները՝ բողոքն ամբողջությամբ բավարարելու, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչելու և ապրանքային նշանի վկայագիր տալու մասին, քանի որ հակադրված նշանների իրավատիրոջ կողմից ներկայացված է նամակ համաձայնագիր մերժված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ:

Փորձաքննության բաժնի պետը նույնպես համաձայնվեց կոլեգիայի նախնական կարծիքի հետ:

Քննարկման արդյունքում համաձայնվելով կոլեգիայի նախնական կարծիքի հետ, և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքն ամբողջությամբ բավարարել, կրկնական փորձաքննության որոշումն ամբողջությամբ չեղյալ ճանաչել և «G» (IR1295744) ապրանքային նշանի վկայագիր տալ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀ ԳԱՐԵԳԻՆ ՄԵԼՔՈՆՅԱՆ